

Թիւ 309
Մայիս 26, 1959

Արժանաշնորհ
Տ. Պօղոս ԲՀՆՅ. Մանուկեան
Նախագահ Միական Խորհուրդի
Ս. Յակոբ Եկեղեցւոյ
Ռիչմոնտ.

Սիրելի Տէր Հայր,

Առաջնորդ Սրբազան Հօր հրահանգով այսու կը յիշեցնենք Ձեզի
Թէ 1958 Նոյեմբեր 26 Թուակիր եւ Թիւ 87 շրջաբերականով Ձեզի յանձնա-
րարուած էր Թեմական Կանոնադրութեան համաձայն, գումարել համայնքիդ
ծխական ժողովը յունուարին կամ փետրուարին մէջ եւ ծխական տեղեկագիրի
համար ներփակեալ հարցարանը լեցնելով ամենէն ուշը փետրուարի կէսին
վերադարձնել Առաջնորդարան:

Շատ զարմանալի է որ ցարդ չէք կատարած այդ յանձնարարութիւ-
նը: Այդ պակասը լրացնելու համար ներկայիւս դարձեալ ներփակ Ձեզի կը
դրկենք տեղեկագիրի համար հարցարանի օրինակը, խնդրելով որ առաջին
պատեհութեամբ զայն լեցնելով Առաջնորդարան վերադարձնէք:

Յառաջիկայ Թեմական Պատգամաւորական ժողովին ներկայացնելիք
Թեմական Խորհուրդի տեղեկագիրը ամբողջացնելու համար անհրաժեշտ է մեր
տրամադրութեան տակ ունենալ Թեմի բոլոր ծուխերուն տարեկան տեղեկագրե-
րը Յունիս տասէն առաջ:

Ապաւինելով Ձեր գործակցութեան.

Մնամք խորին յարգանօք

Սուրէն Մանուկեան
Դիւանապետ Առաջնորդարանի